

ՏԵՂԵԿԱՆՔ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Հոդված 7. Դուստր և կախյալ ընկերությունները

1. Ընկերությունն իրավունք ունի ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ: Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է այդ երկրների օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

2. Ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:

Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերության կամ ընկերակցության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի այդ ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:

3. Եթե ընկերությունը համարվում է դուստր կամ կախյալ մեկ այլ ընկերության նկատմամբ, որն իր հերթին դուստր կամ կախյալ է երրորդ տնտեսական ընկերության կամ ընկերակցության նկատմամբ, ապա առաջին ընկերությունը դուստր կամ կախյալ է ճանաչվում նաև երրորդի նկատմամբ: Սույն դրույթը կիրառվում է հիմնական տնտեսական ընկերության (ընկերակցության) և դուստր կամ կախյալ ընկերության միջև հետագայում ծագող հարաբերությունների բոլոր հաջորդական դեպքերի նկատմամբ:

3.1 Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերը:

4. Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերության (ընկերակցության) պարտավորությունների համար:

Հիմնական ընկերությունը (ընկերակցությունը), որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, նրա հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:

Հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքն ամրագրված է նրանց միջև կնքված պայմանագրում կամ ծագում է օրենքով չարգելված այլ ձևով:

5. Դուստր ընկերության բաժնետերերը (մասնակիցները) իրավունք ունեն հիմնական ընկերությունից (ընկերակցությունից) պահանջել հատուցելու վերջինիս մեղքով դուստր ընկերությանը պատճառված վնասները:

Վնասները համարվում են պատճառված հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

6. Հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով դուստր ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Դուստր ընկերության սնանկությունը համարվում է առաջացած հիմնական ընկերության (ընկերակցության) մեղքով, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերության (ընկերակցության) պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:

7. Սույն հոդվածի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում հիմնական ընկերությունը (ընկերակցությունը) ենթակա է պատասխանատվության, եթե նա գիտեր կամ կարող էր իմանալ համապատասխան հետևանքների առաջացման մասին:

8. Տնտեսական ընկերությունը կամ ընկերակցությունը, որը ձեռք է բերել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը, պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել այդ մասին:

Հոդված 38. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

1. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ ~~տեսակի~~ արտոնյալ բաժնետոմսեր, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ժողովում, եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի դասերի համար սույն օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ընկերության որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միևնույն իրավունքները:

Սույն կետի երկրորդ մասով նախատեսված՝ ձայնի իրավունք ունենալու դեպքերում քվեարկությունների ժամանակ արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատեր բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ:

2. Կանոնադրությամբ պետք է սահմանվի Ընկերության կողմից տեղաբաշխվող և հայտարարված յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է Ընկերության լուծարման ժամանակ): Արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը և լուծարային արժեքը սահմանվում են դրամական տեսքով կամ որպես տոկոսադրույք՝ այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը և լուծարային արժեքը համարվում են սահմանված նաև այն դեպքում, եթե կանոնադրությամբ նախատեսված է դրանց որոշման կարգը:

Եթե Կանոնադրությամբ չի նախատեսված արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, ապա դրանց սեփականատերերը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ շահութաբաժիններ ստանալու հավասար իրավունք ունեն:

Եթե Կանոնադրությամբ նախատեսված են արտոնյալ բաժնետոմսերի երկու կամ ավելի դասեր, ապա Կանոնադրությամբ պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը՝ յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի համար: Կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինը, որի մեծությունը սահմանված է Կանոնադրությամբ, կուտակվում և վճարվում է հետագայում (կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսեր): Կանոնադրությամբ կարող են սահմանվել նաև որոշակի դասերի արտոնյալ բաժնետոմսերի, Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի կամ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի փոխարկման հնարավորությունները և պայմանները:

3. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:

Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են Կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են այդ դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը:

4. Առանձին դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, որոնց հասանելիք շահութաբաժնի չափը սահմանված է Կանոնադրությամբ, բացառությամբ կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի, իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել այն ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հետևում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու մասին: Այդ իրավունքը դադարում է տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո:

Առանձին դասերի արտոնյալ կումուլյատիվ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել այն ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, որը հետևում է տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ այդ դասի արտոնյալ կումուլյատիվ բաժնետոմսերի դիմաց բոլոր կուտակված շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ ծավալով վճարելու մասին: Այդ իրավունքը դադարում է տվյալ դասի արտոնյալ կումուլյատիվ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով բոլոր կուտակված շահութաբաժինների վճարումից հետո:

5. Կանոնադրությամբ առանձին դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել ձայնի իրավունք, եթե Կանոնադրությամբ նախատեսված է նաև տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի

փոխարկման հնարավորությունը հասարակ (սովորական) բաժնետոմսերի: Ընդ որում, նման արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը պետք է ունենա ծայների այնպիսի քանակ, որը չպետք է գերազանցի ծայների այն քանակը, որը նա կունենար արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկման դեպքում:

5.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:

Սույն մասի իմաստով իրավունքների սահմանափակում են համարվում արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները:»:

6. Արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերով փոխարկելիս Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

7. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

8. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «գ», «դ», «է» և «ը» ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան, իսկ «բ», «ե», «զ», «թ» և «ժ» ենթակետերով սահմանված իրավունքներից՝ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

9. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը կրում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտականությունները:

Հոդված 38.1. Բաժնետիրական համաձայնագիր

1. Բաժնետիրական համաձայնագիրը բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր է: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում համաձայնագրով սահմանված ձևով քվեարկելու, քվեարկության կարգը կամ քվեարկությունը այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և (կամ) օտարելու, մինչև պայմանագրով

հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև բաժնետիրական ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Ընկերության ժողովում որոշումների ընդունման համար բավարար ծայների՝ սույն օրենքով կամ սույն օրենքի հիման վրա կանոնադրությամբ նախատեսված քանակը չի կարող փոփոխվել Բաժնետիրական համաձայնագրով:

2. Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Բաժնետիրական համաձայնագրի կողմ կարող են լինել Ընկերությունը, բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են Ընկերության բաժնետոմսերին: Եթե Ընկերությունը հանդիսանում է բաժնետիրական համաձայնագրի կողմ, ապա ալյախի բաժնետիրական համաձայնագրի կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի IX գլխի դրույթները:

3. Բաժնետիրական համաձայնագրի առարկա չի կարող լինել Ընկերության խորհրդի կամ գործադիր մարմնի ցուցումների համաձայն բաժնետիրական համաձայնագրի կողմերի քվեարկելու պարտավորությունը:

4. Բաժնետիրական համաձայնագիրը պարտադիր է միայն համաձայնագրի կողմերի համար: Բաժնետիրական համաձայնագրի խախտմամբ կնքված գործարքը կարող է շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա դատարանի կողմից ճանաչվել անվավեր միայն այն դեպքում, երբ ապացուցվի, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ պետք է իմանար բաժնետիրական համաձայնագրով նախատեսված սահմանափակումների մասին:

5. Բաժնետիրական համաձայնագրի խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե ապացուցվում է, որ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն ընդունվել են ֆիդուցիար պարտականությունների խախտմամբ:

6. Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել դրանից բխող պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև դրանով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:»:

Հոդված 47. Բաժնետերերի շահերի ապահովումն ընկերության բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում

1. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող Ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:

~~2. Ընկերության կողմից բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Ընկերության բաժնետերերը չունեն քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Եթե տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով, ապա կանոնադրությունն Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսել քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝ իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:~~

2. Բաց ընկերության ժողովն իրավունք ունի որոշել չկիրառելու (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի սույն հոդվածի 1-ին մասում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

~~3. Ժողովն իրավունք ունի որոշել չկիրառելու քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի սույն հոդվածի 2-րդ կետում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործողության ժամկետը: Նման որոշումներն ընդունվում են ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:~~

~~Նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման գործողության ժամկետը սահմանում է ժողովը, բայց որոշման ընդունման պահից ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:~~

3. Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելը Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:

4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի վրա, որոնք ձեռք են բերել ձայնի իրավունք՝ սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

Հոդված 49. Ընկերության կողմից շահութաբաժինների վճարման կարգը

1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով և կանոնադրությամբ:

Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի (դասի) համար հայտարարված շահութաբաժինները՝ դրամով, իսկ

կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ գույքով, այդ թվում՝ տվյալ Ընկերության բաժնետոմսերով:

2. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության գուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

3. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

4. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

[Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:](#)

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին (այսուհետ՝ տարեկան ժողով) մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

Հոդված 64. Շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը

1. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

2. 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

~~Խորհրդի անկախ անդամ է համարվում այն անձը, որը չի հանդիսանում Ընկերության միանձնյա գործադիր մարմին՝ տնօրեն, գլխավոր տնօրեն (այսուհետ՝ միանձնյա գործադիր մարմին), կամ Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի՝ վարչության, տնօրինության (այսուհետ՝ կոլեգիալ գործադիր մարմին) անդամ, և որի ամուսինը, ծնողները, երեխաները, քույրերը և եղբայրները պաշտոններ չեն զբաղեցնում Ընկերության կառավարման մարմիններում:~~

Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Ընկերության կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության ձեռք բերված գույքի, ստացված ծառայության կամ Ընկերության համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

3. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

~~ա) գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը:~~

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.

բ) գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշման ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառություն է:

5. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

6. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի VIII գլխի դրույթները:

Հոդված 68. Ժողովի որոշումները

1. Բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ սույն օրենքով և կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմս է համարվում այն հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քվեարկվող հարցի վերաբերյալ քվեարկությանը մասնակցելու իրավունք: Եթե արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք, ապա քվեարկող բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված արտոնյալ բաժնետոմսերի տրված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է որպես առանձին քվեարկող բաժնետոմս:

2. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

3. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ, եթե սույն օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան

մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

5. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

6. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ: Բաժնետեր իրավաբանական անձի որոշումը պետք է ընդունվի վերջինիս կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

7. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով պետությանը պատկանող բաժնետոմսերով Ընկերությունների ընդհանուր ժողովներում լիազորված պետական մարմինը (մարմինները) կամ վերջիններիս կողմից լիազորված անձը (անձինք) մասնակցում են որոշումների ընդունմանը՝ միայն Կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:

8. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով համայնքին պատկանող բաժնետոմսերով Ընկերությունների ընդհանուր ժողովներում համայնքի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը մասնակցում է որոշումների ընդունմանը՝ միայն համայնքի ղեկավարի (ավագանու համաձայնությամբ) համապատասխան որոշման առկայության դեպքում:

9. Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

10. Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

11. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին սույն օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

12. Եթե ժողովի որոշումն ընդունվել է Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ միաձայնությամբ, ապա սույն օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ կետով, 68-րդ հոդվածի 10-րդ կետով, 69-րդ հոդվածի 4-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-6-րդ կետերով, 71-րդ հոդվածով, 73-րդ հոդվածով, 74-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ-չորրորդ մասերով, 2-րդ կետով և 4-րդ կետի առաջին մասով, 75-րդ հոդվածով և 79-81-րդ հոդվածներով սահմանված պահանջները չպահպանելը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով որոշումներն անվավեր ճանաչելու համար:

13. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել սույն օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը: ~~Դատարանն իրավունք ունի ուժի մեջ բողոքել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա և թույլ տված խախտումներն էական չեն:~~

Հոդված 71. Ժողովի գումարման մասին ծանուցումը

1. Սույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, իսկ ժողովի գումարման մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այն հրապարակելու միջոցով, եթե կանոնադրությամբ ծանուցման այլ ձև նախատեսված չէ:

Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը, այդ թվում՝ նաև մամուլի այն միջոցը, որում պետք է հրապարակվի ծանուցումը, սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ:

Եթե կանոնադրությամբ ծանուցման որոշակի ձև սահմանված չէ, ապա բաժնետերերի ծանուցումը ժողովի մասին, ինչպես նաև քվեաթերթիկների տրամադրումը սույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ անձամբ հանձնելով:

2. Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու ժամկետները սահմանվում են կանոնադրությամբ:

Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունը պարտավոր է ժողովի գումարման մասին իր բաժնետերերին սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն ~~15~~21 օր առաջ:

3. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:

4. Տարեկան ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը.

բ) Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

գ) տեղեկություններ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) առաջադրվող թեկնածուների մասին.

դ) կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:

Օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել նաև բաժնետերերին՝ ժողովը նախապատրաստելու ընթացքում ներկայացվելիք այլ տեղեկությունների լրացուցիչ ցանկ:

5. Ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված տեղեկությունները և նյութերը:

6. Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

Հոդված 84. Խորհրդի իրավասությունները

1. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

ե) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ.

է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

թ) սույն օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները, եթե կանոնադրությամբ այդ իրավունքները վերապահված են խորհրդին.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժէ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին և, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժը) Ընկերության մասնաձյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժ¹) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ սույն օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

իա) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

2. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

3. Սույն օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի «գ», «թ», «ժգ», «իբ-իդ» ենթակետերով նախատեսված հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Հոդված 85. Խորհրդի ընտրությունները

1. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ սույն օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Եթե խորհրդի անդամներն ընտրված են գումարային (կումուլատիվ) քվեարկությամբ, ապա ժողովի՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել միայն խորհրդի բոլոր անդամների վերաբերյալ:

2. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տաս և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

3. Խորհրդի ընտրությունները 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում իրականացվում են գումարային (կումուլատիվ) քվեարկությամբ:

Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել գումարային (կումուլատիվ) քվեարկությամբ, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ:

Գումարային (կումուլատիվ) քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակին հավասար ձայների քանակ:

Բաժնետերը քվեարկության ընթացքում իրավունք ունի ձայները տրամադրել մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

4. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:

5. Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ:

Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում է մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, ով՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ,

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրությունը,

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ,

գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն ընկերության և (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ,

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող,

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ,

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր,

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող,

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:

Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:

Խորհրդի անդամների նկատմամբ կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:

Հոդված 87.1 Բաց ընկերություններում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը

1. Բաց ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

2. Բաց ընկերությունում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

3. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել՝ այն անձը, ով ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

4. Աուդիտի հանձնաժողովի անդամները պետք է ունենան ընկերության գործունեության ոլորտին առնչվող մասնագիտական գիտելիքներ: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է գիտելիքներ ունենա հաշվապահական հաշվառման, աուդիտի և ռիսկերի կառավարման բնագավառում:

5. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի

նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

6.Աուդիտի հանձնաժողովը իրականացնում է.

ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և խորհրդին առաջարկությունների ներկայացում դրանց հաստատման վերաբերյալ.

գ) Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացում.

ե) Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում արտաքին աուդիտորի հետ.

է) Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվության տրամադրում խորհրդին.

ը) Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը հետևում.

թ) Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և դրանց ներդրմանը հետևում:

Ընկերության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:

Հոդված 90. Խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվությունը

1. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից (**ֆիդուցիար պարտականություն**):

Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության կամ այլ հանգամանքների ուժով Ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու հնարավորություն ունեցող անձը չպետք է դրդի Խորհրդի անդամներին, Ընկերության տնօրենին (գլխավոր տնօրենին), վարչության ու տնօրինության անդամներին, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությանը և կառավարչին՝ կայացնելու այնպիսի որոշումներ, որոնք հակասում են Ընկերության շահերին կամ այն բաժնետերերի

օրինական շահերին, որոնք էական ազդեցություն չեն կարող ունենալ Ընկերության որոշումների վրա:

2. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Օրենսգրքով, սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները:

3. Եթե սույն հոդվածի դրույթներին համապատասխան Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում մի քանի անձ, ապա նրանք Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

4. Անձն ազատվում է սույն հոդվածով սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

5. Ընկերությունը կամ Ընկերության այն բաժնետերեր (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

Հոդված 93. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը

1. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության

համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

~~1.1 «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով խոշոր ընկերությունում ընկերության աուդիտն իրականացնող անձը կամ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի կնքման որոշումն ընդունելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, տալիս է եզրակացություն գործարքի՝ սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:~~

1.1 Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին, ապա անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը, տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:

2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

Հոդված 96. Տեղեկությունների պարտադիր հրապարակումը

1. Բաց Ընկերությունը պարտավոր է հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝

ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշիվը.

բ) բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ Ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագիրը.

գ) տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով.

դ) սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

~~1.1. Ընկերությունը պարտավոր է շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում:~~

1.1 Բաց Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը տրամադրել Ընկերության բոլոր բաժնետերերին կամ գործարքի

կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, եթե Ընկերությունը չունի իր պաշտոնական ինտերնետային կայքը:

2. Ընկերությունը, ներառյալ՝ փակ Ընկերությունը, իր թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում պարտավոր է հրապարակել տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ծավալով և կարգով: